ծնողքն և Պաղտասար վրդ. Ս. Աթոռի մատենադարանին Վասակ արքայեղբօր ՉՁՁ (=1337) թուական ձեռագիր Աւետարանին արծաթեայ կողքը իրենց ծախքով շինել կուտան և կը գրեն հետևեալ յիշատակարանը նոյն ձեռագրին մէջ. «Յիշատակ է սուրբ Աւետարանիս արծաթեայ կողքն Վանեցի մհտ. Մարգարին և կողակցոյն Փէրուխանին և որդւոյն Պաղտասար վրդ.ին և ամենայն զարմից նոցին ի դուռն Ս. Յակոբայ թվ. ՌՃՂԹ» (=1750)։

ՊԱՂՏԱՍԱՐ ՎՐԴ. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՅԻ.— Առ. Զնքուշի. Ս. Յակոբի վանքի մատենադարանին 1867ին կը նուիրէ Ներսէս Լամբրոնացիին Առակաց, Ժողովողի և Իմաստութեան գիրքերուն մեկնութիւնը որ 1329ին ընդօրինակուած է Վայոց ձորի մէջ իշխանաց իշխանին պարոն Պուրթէլի, և Նչեցի հռետոր Եսայիի վարժապետութեան օրով (Սիսի 1867. էջ 80)։

ՊԱՂՏԱՍԱՐ ՔՀ. ՀՐԶՈՒԵՑԻ.— Հաւանաբար 1651ին ուխտաւորութեամբ Ս. Յակոբի վանքը կը գտնուի և ստացողն ըլլալով նկարազարդ ձեռագիր Շարակնոցի մը՝ զայն կը յիշատակէ հետևեալ յիշատակագրութեամբ. «Ես տէր Պաղտասարս Հրզուեցի ի սուրբ Երուսաղէմ ի թվին ՌՃ (=1651)ին ի հալալ ինչից իմոց, ստացայ զեղանակաւոր տառս... որ կոչի շարակնոց, յիշատակ ինձ և ծնողաց իմոց Էնիաթին և մղտեսի Մանուչակին և կողակցին իմոյ մղտեսի Փարիխոհին և նորաբողբոջ որդւոյն իմոյ սրկ. Երեմիային և փոխեցելոյն առ Քս. տէր Պետրոսին, մղտեսի Ղարիպին, և Զարգարին և դստերացս. բ. Հռիփսիմին և միւս Երեմիային...։» (Խաչ. Ցուց. տետր ԺԷ. էջ 1327)։

ՊԱՏՐԻԿ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ, ԿԵՍԱՐԱՑԻ.— Ծ. 1858ին Թալասի մէջ. այժմ Ամերիկա կը գտնուի։ Ս. Փրկչի վանքին վերանորոգութեան հանգանակութեան համար, Պոլսի մէջ 1889ին կոնդակ կ'ստանայ ազգ. պատրիարքարանէն և կ'արդիւնաւորէ զայն իր ջանքերովը. 1896ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը։ 1925ին փափաք կը յայտնէ կրթական ծախքը հոգալ Ս. Յակոբի վանքին մէջ եկեղեցականութեան պատրաստուողներէ կազմուած մասնաւոր դասարանի մը, իր եղբօր Կիւլլապիի և որդւոյն Սերովբէի յիշատակին համար, և այս նպատակաւ հինգ տարի կ'ստանձնէ վճարել 5000 ոսկի, տարեկան 1000 ոսկիի մասնավճարով։ Վանական վարչութիւնը ընդառաջ եր-